

# Մ ՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ԱՇԱԿԵՐՏՔ

ՅԵՐԿԻՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՄՐՑԱՆՍ ՄԱՐՄԵԱԿԹԱՆԱՅ

Ի ՎԵՆԵՏԻԿ

ԵՒ ՀԱՆԴԷՍ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԳԵՒՄԱՐՇԽՈՒԹԵԱՆ ՌՈՍՄԱՆՑ

Անհաւատալի բան մ'է եւրոպայի մէջ հիմա մարմնակրթանաց տրուած կարեւորութիւնը։ Նորանոր բազմաթիւ ընկերութիւնք կը կազմուին, գրամագլուխներ կը ժողովին, առանձին ճառասութիւնք կ'ըլլան, սեպհական լրագիրներ կը տպուին, ամենն ալ մարմնակրթանաց յառաջադիմութենէն համար։ Բայտնի է որ ասոր համեմատ օգուտն ալ պիտի ըլլայ. օգուտ երկու տեսակ, զինուորական և բժշկական։

Արդեօք մարմնակրթանք որչափ օգտակար եղած են զինուորութեան, աւելորդ է խօսիլը. որովհետեւ 'ի հնուց 'ի վեր այն ազգերն որոնք ունեցեր են մարմնոյ այս խաղերը, միշտ կտրիճ զինուորներ ալ ունեցեր են։ Անոր համար Բունաց մէջ տարեկան խաղերէն զատ, ինչպէս Ոլիմպիականքն և իսթմեանք, և այլն, կար նաև առանձին մարզարան՝ ուր պատանիք վարժելու կ'երթային։ Իսկ աւուղլութեան նկատմամբ որչափ օգտակար ըլլալը ցուցնեն, լու համար, բաւական է ստոյգ մարմնակրթանաց մէջ վարժողներուն երեսները և բազուկները նայիլ. ստոյգ մարմնակրթանք կ'ըսեմ, որովհետև մարմնակրթանաց մաս չեմ համարիր լարախաղիք և անոնց նմանեաց ըրածները, որոնց կատարածը շատ անգամ վտանգ է։ Ստոյգ մարմնակրթանքն

այն է որ չափաւոր շարժումներով կը զօրացնէ կուրծքը, շիւրքը, թևերը, սրունքը, թեթևութիւն կու տայ անոնց և ճկունութիւն, վարժ կ'ընէ զանոնք ցրտոյ և ջերմութեան, երբ ձմեռն աւանդներու հաստ զգեստներու կամ մուշտակներու մէջ պըլլուիլ կը փափագին, կտրիճ մարմնակրթողը սառուցի վրայ ամենաբարակ զգեստով ամեն փորձերն կ'ընեն. և ասիկայ իրենց փնաս չբերելն անկէ կ'երևի, որ ըստ վկայութեան հիւանդանոցաց Տեպի մը, տարին քանի մը հարիւր հիւանդք նուազեցան 'ի պատանեաց, յետ որոյ մարմնակրթանք միտան քաղաքիս դպրոցաց մէջ։

Սակայն այս բնելովս չեմ ուզեր հասկընել որ մարմնակրթանքն առ հասարակ ամենուն ալ կարեւոր է և օգտակար, որովհետև ինչպէս գեղերը շատ անգամ ըստ բնութեան ընդունուին են, նոյնպէս նաև այս տարօրինակ բայց բնական դեղն ալ. ի՞նչ բնութիւն որուն օգտակար է և կարեւոր, կայ ալ որուն անօգուտ է, մինչև փաստաբեր ալ. և ասոր մէջ պիտի ըլլայ դատարարակաց խոհեմութիւնը և զգուշութիւնը. թէպէտ այս ըսածս հազիւ 5 առ 100 կը հանդիպի։

Արդ 'ի սկզբանէ հետէ չափաւոր մարմնակրթանաց այլ և այլ օգուտները

տեսնելով, մեր վարժարանք ալ ընդունեցան այս կրթութիւնը. և կրնամ ըսել որ վննետկոյ մէջ մղուած տուողը նախ մեր Ռափայէլեան վարժարանն եղաւ. և թէպէտ յետոյ մեծ ու պղտիկ ուրիշ ամեն դպրոցներ ալ ընդունեցան, այսու հանդերձ առաջնութեան միջանակը ոչ մի դպրոց կրցաւ խել 'ի մեր աշակերտաց. և ոչ միայն իտալիոյ՝ այլ և զանազան անգամ Գերմանիոյ լրագրաց մէջ ալ տեսանք որ գովեստով և համարմունքով կը խօսուէր մեր վարժարանին մէջ եղած մարմնակրթականաց վրայ. թէ նախնական մարզերուն, թէ ուժի և թէ արագաշարժութեան նկատմամբ:

Այս ալ պէտք է աւելցնել որ վարժարանս բնաւ ուսմանց կարգը չէ դրած մարմնակրթանքը, և ոչ անհրաժեշտ կարևոր համարած է. այլ շարժքը երկու ժամ որոշած է, և այն ալ հանգստեան միջոցները, որով ծաւկերտաց թէ օգտակար զբաղմունք մը կ'ըլլայ, և թէ անոնց ուսման ժամերուն նուազութիւն չըլլար:

Իտալիոյ, Աւստրիոյ և Գերմանիոյ քանի մը մարմնակրթական ընկերութիւնք յամին 1874 ուղելով որ աւելի մղուած մը տան ուսման այս ճիւղին և միանգամայն խորախոյս մը քաշերուն, որոշեցին որ ամեն տարի աշնան սկիզբը համաշխարհական մրցանք մը տան. և երթեկի դիւրութեան համար ալ որոշեցին որ առջի տարիները Գերմանիոյ մօտ հիւսիսային Իտալիոյ քաղաքներէն մէկուն մէջ կատարեն այս մրցանքն, որով 1875 տարւոյն համար սահմանուեցաւ համաշխարհական մրցանքը կատարել 'ի Գրէվիզոյ, պղտիկ՝ բայց գեղեցիկ քաղաք մը, երկաթուղով ժամ մը հեռու 'ի վննետկոյ:

Մեր վարժարանին ուսուցիչը Պ. Պետրոս Կալլոյ ասպետ իտալական պետութեան, որ և ուղղիչ է միանգամայն բոլոր վննետկոյ մարմնակրթական ընկերութեանց, շատ ջանաց մեր աշակերտացմէ հինգ վեց հոգի մրցանաց տանելու, համոզելով որ ասով մեծ

պատիւ կ'ըլլար Օսմանեան պետութեան և մեր ազգին. բայց արդեօք կրնայինք համարձակիլ հանել մեր աշակերտները Գերմանիայէն, իտալիայէն, Աւստրիայէն եկողներուն դիմաց, որոնք մարմնակրթանքն արուեստ մը ըրած էին. դարձեալ մեր տարեկան հարցաքննութեանց եղանակին մէջ ինչնալով, ներումն ինդրեցինք և ետ քաշուեցանք:

Բայց որովհետեւ այս տարի մարմնակրթանաց համաշխարհական երկրորդ մրցանքն 'ի վննետկոյ պիտի կատարուէր, օգոստոսի վերջերը, յորով լմընցուցած կ'ըլլան մեր աշակերտքն իրենց տարեկան հարցաքննութիւնքը, և որովհետեւ շատ ալ կը թախանձէր ելալոյ ուսուցիչը, հարկ եղաւ որ վննետկոյ մէջ միայն մեր վարժարանն համարձակի Գերմանիոյ, Աւստրիոյ, Զուիցերիոյ, և իտալիոյ ընկերութեանց դիմաց տասուերկու աշակերտ հանելու: Իրան ըսելով, թէպէտ այս բանս մեծ զարմանաց արժանի էր, և թերեւ յանդիմանութիւն ալ համարուէր, բայց արդէն քաղաքիս մէջ մեր աշակերտաց անունն նախընտրաց տարիներուն տըրուած քննութիւններէն յայսմ ալ ծանօթ ըլլալով, շատոնք յորդոր ալ տուին: Դարձեալ մենք յոյս ունէինք եթէ ոչ գործեաց վրայ, գոնեա նախնական մարզից մէջ կրնային մեր աշակերտք Հայ անուան պատիւ բերել, որուն նախանձաւոր էին իրենք ալ:

Մրցանաց հանդիսին բացումն եղաւ քաղաքիս արքունի իրիկոնին մեծ դահլըճին մէջ. նախագահ նստեր էր Պէռդի անունով առաջնակարգ բժշկապետն. ալ կողով ունէր գաւառապետը, ձախ կողմը՝ քաղաքագլուխն, անոնցմէ վար շատ մը պայտօնեայք տէրութեան և քաղաքավարութեան և ազնուական անձինք: Նախագահը յետ խօսելու համառօտ ճառ մը մարմնակրթանաց կարեւորութեանն ու օգտակարութեանը վրայ, իմացուց որ մրցանքը կը բանար: Իրմէ վերջը ուրիշ ճառախօսներ ալ եղան, որոնք յիշուի

թերևս չափազանց դժվեցին զմարմնա-  
կրթմանս, սակայն ինչպէս ուրիշ տա-  
րի, այս տարի ալ բոլոր այդ ճառա-  
խօսներն, արուեստով բժշկէ էին կամ  
դաստիարակութեան վերակեցուք :

Ժողովը չլուծուած քուէով մրցանաց  
դատաւորներ սահմանուեցան, իւրա-  
քանչիւր ընկերութեանց և քաղաքաց  
գրօշակներ տրուեցան, և ամենքն երկ-  
րորդ օրը հրաւիրուեցան մրցանաց հը-  
րապարակը, որ վերոյիշեալ լիկէտներն  
կը պատկանի :

Այս հրապարակը բոլորովին լերկ  
էր, գետինն աւազ սփռուած բաւական  
թանձրութեամբ. երկինքը պայծառ,  
կրակ կը տեղար, և ամեններն ծառ չկար,  
իսկ չորս կողմը ուրիշ բան չէր տես-  
նուեր՝ բայց եթէ զուգահեռական կամ  
ուղիղ տնկուած զլաններ. յարդէ ձի  
և մարուկ, բարձրէն չուանով կախուած  
օղակներ, քանի մը չուան, երկաթէ  
մեծ գնետակ մը, հաւասարակշռութեան  
փայտէ երկայն գործիք մը :

Հետզհետէ խմբուեցան հրաւիրեալք,  
և դեռ մրցանքը չսկսած՝ այն հրա-  
պարակին վրայ կը տեսնուէին ասդին  
թիթեմ հագուած քանի մը սպրկիկ ե-  
րիտասարդներ, որոնք ժամով առաջ  
սկսեր էին գործինքնուն վրայ աշխա-  
տիլ ազատօրէն, և արդէն քրտինքը կը  
փայլէր ճակատներնուն վրայ. անդին  
գերմանացի մրցող մը որ խալալացոյ մը  
կէս գերմաներէն կէս լատիներէն լե-  
զուով կ'ուզէր խաղ մը բացատրել, և  
վերջապէս քառորդ մը ի զուր յոգնելէն  
վերջը, երբ տեսաւ որ դիմացինը բան  
չի հասկընար, հարկ եղաւ հսկայաձև տե-  
տոնեան հասակով փորձը նիւթապէս  
կատարել. էւ իրաւքնէ կար մրցողաց  
մէջ Բրուսիոյ տէրութենէն զրկուած  
Ֆրանցֆորդցի երիտասարդ մը, որուն  
հասակն երկու մէգրէն նուազ չէր,  
կտր կարմիր երեսով, փայլուն աչուը,  
ներով, աշխայծ և վեհ քալուածքով,  
զոր տեսնողը մէկէն Պէլվէտէրէի Ա-  
պոզոնը կը յիշէր. մեծ բարեկամու-  
թիւն կապեց հայ պատանեաց հետ և  
անոնց ոմանց չափաւորապէս գերմա-

ներէն խօսիլը լսելով շատ կ'ուրախա-  
նար :

Շատ մը քաղաքներ իրենց մարմնա-  
կրթական ընկերութեանց նուիրակ-  
ներն ունէին այն տեղ. ինչպէս էին  
վենետիկ, Պոլոնիա, Դրէվիզոյ, Ռովի-  
կոյ, Միլան, Մոտենա, վիլենցա,  
Դրիէսդ, Կորիցիա, Գարլարուհէ, Անգ-  
լամ, Ֆրանքֆորդ, Լուպիանա, Ենլ,  
Համպուրկ, Մարպուրկ, Քլակէնֆուրդ,  
վեննա, Նայպուրկ, և այլն, և այլն.  
կային նաև քանի մը Զուիցերացիք, եր-  
կու Յոյնք՝ մէկը Աթէնքէն ու միւսը  
Քորֆուէն, ընդ ամենն հինգ հարիւր  
հոգի, բայց մրցողք հարիւր էին թուով,  
և ասոնց մէջ էին նաև մեր երկոտա-  
սան կտորիճ հայ պատանիքն ալ, որոնց  
անուանքն են .

Ճուխունեան Մանուէլ Արդուինցի .

Խաչիկեան Պօղոս Մշեցի .

Հէգիմեան Սարգիս Կ.Պօլսեցի .

Ինճէեան Յովսէփ Կ.Պօլսեցի .

Փաշինեան Փիլիպպոս Արդուինցի .

Ալիքեան Կարապետ Կ.Պօլսեցի .

Կիրեղեան Միհրան Տրապիզոնցի .

Մարիմեան Պետրոս Տրապիզոնցի .

Մաղլմեան Գէորգ Կ.Պօլսեցի .

Միսլայընեան Տիգրան Կ.Պօլսեցի .

Գաւճեան Օգոստինոս Կ.Պօլսեցի .

Գաւուքճեան Անտոն Կ.Պօլսեցի .

Էւ որովհետեւ իւրաքանչիւր գումար-  
ման ամեն մրցողին անունն ու քաղաքը  
կը կորոշացուէր, ինչ տխրածելի կը լը-  
սուէին իւրօրական քաղաքաց անուն-  
ներուն հետ, Արդուին, Մուշ, Տրապի-  
զոն, Կ.Պօլիս. և կամ Կարապետ, Գա-  
րեգին, Տիգրան, և այլն, որոնք այն օ-  
րերը ամենուն ծանօթ անուններ դար-  
ձած էին, և ոչ միայն բերաններու մէջ  
այլ և լրագրներու :

Հարիւր առաջարկեալքն, նախ սահ-

մանեալ տարրական փորձերը կատարեցին, յորս որոնք որ 8 կէտէն վար ունեցան, մրցողաց թուէն ընկան, որով մնացին ընդ ամենն եօթնասուուն եօթն հոգի. իսկ մեր երկոտասանքն ամենն ալ պետք եղած կէտերն ունեցան, նա մանաւանդ մէկ քանին շատ փորձերու մէջ 10 կէտ ունեցան, որ ամենէն բարձրագոյնն էր:

Երրորդ օրն եղաւ բուն մրցանքն, յորում մեծապէս ճշնեցան Գերմանացիք և իտալացիք մէկմէկու ձեռքէ խելու առաջնութեան պատիւը: Երեք ժամ արին քրտինք մտած ազնուական նախանձաւորութեամբ մէկը միսին կը յաղթէր: Մասնաւոր դիտման արժանի էին Միլանու մրցողք ութ հոգի, ամենն ալ կտրիճ հասակաւ, միաձև հագուած երկուստեայն չապէն՝ ճերմակ գիծերով:

Իսկ խաղերէն ամեն մէկը բացատրեցն անկարելի է, վասն զի յետ կատարելու սահմանեալ շարժումներն, իւրաքանչիւր ոք կը ջանար ցուցնելու իր մտաց գիտար: Շատերն օղակներուն վրայ բաց բազուկներով ճօճալէն վերջը, պտտակելով մը գետին կը հասնէին, կամ երկու ձեռու ըններուն վրայ հորիզոնական դրող մարմիննին կը բռնէին, օղակներուն վրայ կը յենուին, կ'իջնային, և այլն. ուրիշները չուանէ մը վեր կ'ենէին, սրունքնին անկիւնաձև մարմնոյն ուղղահայեաց բռնած և միանգամայն սրունից վրայ չուանը օձապտոյտ ուրելով և հետը տանելով. կային որ բարձր ձիուն վրայէն ուղիղ, ուռած կուրծքով կ'անցնէին և հետու կը ցատքէին, կամ երբ բարձր տեղէ մը չկրնային ցատքել, երկայն ձողերու օգնութեամբ մինչև երեք ու կէս մէդր բարձրութենէ կ'անցնէին. իսկ զուգահեռական գլանին վրայ եղած փորձերն անհամար էին, յենուլ մարմինը փոքու վրայ առանց դաշելու, ամբողջ մարմինը ձեռու ըններուն մէջէն անցնել, թռչիլ պտտակելով, ամբողջ մարմնով քանի մ'անգամ դառնալ մեծ թռիչով գլանին վրայ, ուղղանկիւն վեր բարձրանալ, մարմինը մէկ թևի վրայ

բռնել, ձեռքը ամեն դիրքով ճկել, և այլն, և այլն:

Այսպիսի մրցողաց դիմաց, որոնցմէ ոմանք տէրութիւններէ զրկուած, ուրիշներն իրենց արուեստ մ'ըրած, թե՛րեւ կարծէ մէկը որ Հայերն և ոչ յիշուեցան: Կար գերմանացի մը, զոր վերն Ապոլոն կոչեցինք, որ վեց մէդր հեռաւորութեամբ կը ցատքէր և երկու բարձրութեամբ. սակայն ոչինչ նուազ հաճոյ անցաւ հանդիսատեսաց և դատաւորաց Ալլըեան կարապետին աշխոյժ և ընտիր ցատքն, որուն նմանը չկար մրցողաց մէջ ըստ վկայութեան բազմաց: Կար վիշէնցացի մը և Գլակէնֆուրդցի մը, որոնք փայտեայ գլաններուն վրայ լարախաղիցմէ վար չէին մնար. սակայն թերեւս այնչափ աչք չգրաւեցին՝ որչափ իւրեքդեան Գարեգնին աշնուական արագաշարժութեան խաղերը. ճիւղունեան Մանուէլին ու ժի փորձերը տեսնելով, ոմանք Մանուէլի տեղ սկսան զինքն Հերակլէս կոչել, Մարիման Պետրոսին ձիու վրայէն ցատքն, Խաչիկեան Պօղոսին օղակներուն և հորիզոնական գլանին վրայ ցուցած ճարտարութիւնքն զարմացուցին տեսողքը: Այնպէս որ Դրիէստի լրագիր մը այս մրցանաց հանդէսը երկայն բարակ նկարագրելէն ետքը, մանրամասն մարզից իջնալով այսպէս կը խօսի.

«Օղակներուն մէջ ամենէն նշանաւոր գտնուեցան Ալպերդի Միլանցի և Գարեգին Հայազգի»:

«Զուսպօհեռական գլանին վրայ նշանաւոր գտնուեցան Գամէրէր Գլակէնֆուրդցի և երկու Հայազգի»:

«Զողով ցատքելու մէջ նշանաւոր գտնուեցան Գազակրանտէ Վենետիկեցի և Գարեգին Հայազգի»:

Գեռ ուրիշ շատ փորձերու մէջ առաջին կարգի կը դնէ ղՀայերը: Որով Հայերն ալ ցուցին, որ եթէ Գերմանացուց և իտալացուց հաւասար չեն, գոնեա քիչ վար կը մնան. և եթէ կողմնակցութիւն կամ քանի մը քաղաքաց անձնասիրութիւնը գոհ ընելը չըլլար,

ապահովապէս այն եօթնասունեւեօթն միջողաց մէջ հինգերորդէն վար չէր մնար Ալիքեան պատանին, ինչպէս խորհրդածեցին լրագիրներէն ոմանք ալ: Սակայն գոհ կրնանք ըլլալ որ իտալացի, Գերմանացի և Աւստրիացի ընտիր միջողաց մէջ Հայ պատանի մը երկու տասներորդ մրցանակն ընդունեցաւ և գնդապետ անուանուեցաւ: Ալիքեան Կարապետէն վերջը կու գային Կարեղեան Գարեգին, յետոյ Ճուխունեան Մանուէլ, և այլն, և այլն. և ամենէն յետինն ալ յիսներորդէն վար չմնաց:

Մրցանքէն ետքը միաբան հաւանու թեամբ որոշուեցաւ որ յամին 1877 Վիլինցա քաղաքը ժողովին և յամին 1878 Պրեսլաւիա. սահմանուեցան նաև գալ տարուան որոշեալ մարդերն: Թետոյ բոլոր մրցողք և ընկերութիւնք հասարակաց խնջոյից կանչուեցան, որուն գլուխ նստան Պէռզի՝ նախագահ մարմնակրթական դաշնակից ընկերութեանց, գաւառապետն, քաղաքագլուխը, և այլն, և այլն. և թէպէտ այն սեղանին հաղորդ չեղան մեր աշակերտքն, ղայ սակայն ըստ նոյն լրագրին Դրիէստի «բաժակներ քամուեցան ի կենդանութիւն Գերմանացի, իտալացի և Հայ մարմնակրթելոց»:

Միւս օրը մեծ չքեղութեամբ գոյուեցաւ այս մրցանաց հանդէսն, և բաժնուեցան իւրաքանչիւրին իրենց քաջութեանց վկայագիրքն, և անոնցմէ գատ ի յիշատակ այս հանդիսին՝ վենետկոյ քաղաքապետութիւնն ընծայ մ'ալ աւելցուց կտրիճ գտնուողներուն. այսինքն, ուխտունեութ հարիւրորդամէյր մեծութեամբ Ս. Մարկոս եկեղեցւոյն լուսանկար պատկերը: Այս ընծաներուն վրայ ալ այսպէս կը լսօսի Դրիէստի նոյն լրագիրն. «Նախ Դրիէստի ընկերութիւնն ընդունեցաւ վենետկոյ քաղաքին ընծան, յետոյ Հայոց Վենետկոյ դպրոցը, որոնց մեծ պատիւ եղաւ մրցանաց մասնակցին»:

Առ մեզ ուղղուած լուսանկարին վրայ այսպէս արձանագրուած էր.

Il Municipio di Venezia  
All'Istituto Armeno in Venezia  
In occasione del Congresso e del II  
Concorso Ginnastico Internazionale  
Venezia Agosto 1876

Sindaco  
Conte Donà

Presidente Federale  
Dott. Antonio Berti

Այս մրցանաց վերջին իրիկունը սահմանուած էր կատարելու մեր տարեկան մարմնակրթանաց քննութիւնն ալ. և թէպէտ օդը յաջող չգնաց, այնուհանդերձ հանդիսականք պակաս չէին: Իսկ թէ ինչ եք ունեցաւ, համառօտ մը կը բացատրէր երկրորդ օրը Վենետիկ լրագիրն.

«Երէկ իրիկուան Հայոց Վարժարանին մարմնակրթանաց քննութիւնը, որ կատարուեցաւ ի ներկայութեան շատ տնձանց, ամեն կողմանէ փառաւոր եղաւ. ամենը կը մրցէին յերազուծեան, ուժի և վայելչութեան մէջ: Համաշխարհական մրցանաց ամենէն դժուար փորձերը մեծ ճշգրտեամբ կատարեցին. և միակ Հայոց Վարժարանը մեծ մրցանաց տասուերկու պատանիք ներկայացուց. և թէ որչափ քաջ էին, անկէ յայտնի է որ անոնցմէ Ալիքեան Պ. Կարապետը եօթնասուն և եօթն միջողաց մէջ երկուտասներորդ եղաւ. և անշուշտ աւելի առաջիններուն մէջ կը գասուէր, թէ որ քաջերուն թուոց փոփոխութիւն մը չըլլար»:

Ահա այս է պատմութիւնն այն համաշխարհական մրցանաց որուն մասնակցեցան մեր աշակերտք, և տեսնելով զանազան օտար լրագրաց մէջ հրատարակուած, չուզեցինք բոլորովին անտարբեր երեւիլ ամենին լուծով, այլ հաղորդել նաև աղգայնոց՝ որոնք Հայ անուան պատիւը կը փնտռեն:

Մարմնակրթմանաց մրցանքէն քանի մ'օր յետոյ եղաւ վարժարանիս Ուսմանց տարեկան Պարգևաբաշխութեան հանդէսը, որուն նախագահ նստած էր Մխիթարեան Միաբանութեան նոր ընտիր ընդհանրական Աբգայն, Գերապատիւ Հ. Իգնատիոս վ. Կիրեղեան, որ առաջ ինքն էր վարժարանիս վերատեսուչն, և որ արժանապէս իր վաստակը ինքնին պսակեց: Այլ կողմի նստած էր Հայոց գրականութեան պարծանք, հանգուցեալ Գեր. Եղաւարդ Արք. Հիւրմիւզ, որ ընտիր տաղաչափութեամբ յորդոր մ'ալ կարգաց աշակերտաց: Օսմանեան պետութեան հիւպատոն Ալեքսանդարմ Մաքսուտ Մի. քայէլ Էֆէնտի, նոյն ատեն Կ.Պոլիս գտնուելով, իրեն տեղը կար փոխահիւպատն, Մարշէլոյ կոմսն, տէրու թեան և քաղաքավարութեան պատուաւոր անձինք, շատ մը հրաւիրեալք, բարեկամք և ուսուցիչք:

Հանգէն բացուեցաւ երգով մը, որուն համար մեծապէս ծափահարուեցան թէ՛ աշակերտք և թէ՛ անոնց քաջ և ճարտար ուսուցիչն Պ. Նիկողայոս Պղոթն, քաղբիս մայր եկեղեցւոյն երաժշտութեան զուխն, Նոյնպիսի ընդունելութիւն գտան ուրիշ հինգ երգեր ալ, զոր երգեցին աշակերտք հանգիսին այլ և այլ միջոցներուն: Գովուեցան և ծափահարուեցան իրենց մտադիր դաշնակ զարնելուն համար երկու աշակերտք ալ, Միքայէլեան Յովսէփ և Կիրեղեան Գարեգին:

Յառաջացեալ քանի մ'աշակերտք զանազան լեզուով համառօտ ճառախօսութիւններ ըրին, և էին փաշինեան փրիպպոս Հայերէն, Մատինեան Վիկտոր գաղղիերէն, Չէէպեան Յարութիւն անգլիերէն, Խաչիկեան Պօղոս տաճկերէն, Ալլեբեան Կարապետ գերմաներէն, Փափաղեան Յովսէփ Իտալերէն: Ամենէն վերջը աշակերտաց համառօտ բայց ազգու խրատ մը խօսեցաւ Աբրահայրն, յորդորելով զանոնք հաւատարիմ գտնուիլ իրենց կրօնական և ընկերական պարտուցը մէջ:

Եւ ճամբիտ գիտութեամբ լուսաւորել իրենց ընթացքը այս աշխարհիս ամենայն կոծութեանց մէջ:

Յետոյ ամենուն ալ ըստ արժանեաց մրցանակներ բաշխուեցան. և երբ Աբրահայրն ոտք ելաւ, դաշնակը կը հընչեցունէր օսմանեան Չուս կամ Մարշէլ: Պարգևաբաշխութեան դահլորճէն դուրս վայելուչ սրահի մը մէջ դրուած էին աշակերտաց տարեկան աշխատութիւնքն ուրուագծութեան, պատկերահանութեան և տեսարանագծութեան, ընդ ամենն երկու հարիւր կտորէն աւելի, Բոլոր հանդիսականք ժամով զբաղեցան դիտելու զանոնք, մանաւանդ երկու պատկերահանութեան աշակերտաց քաջամները, որոնք են Էմինեան Յովսէփ և Չօպանեան Մկրտիչ:

Իսկ աշակերտք են բոլորն 70 թուով, գրեթէ ամենն ալ ձրիավարք, ու չորս դաս կը բաժնուին՝ և ունին ներքին Տեսուչ և Վերակնցուք վեց անձինք, և արտաքին տասնուվեց վարժապետք, որոնք ամենն ալ վնեհակոյ բարձրագոյն դպրոցաց դասատուք են:

Անցեալ 1875-76 ուսումնական տարւոյն մէջ բարձրագոյն Դասուն սովորած ուսմունքն էին. Հայերէն, Տաճկերէն, Գաղղիերէն, Անգլիերէն, Նաե Գերմաներէն՝ կարողք միայն. Իմաստասիրութիւն, Իրաւագիտութիւն, Բնական Պատմութիւն, Բնագիտութիւն, Բնալուծութիւն, Երկրաչափութիւն, Հաշուեկալութիւն, Ուրուագրութիւն, Ճայնական Երաժշտութիւն, Մարմնակրթութիւն, և այլն:

Երկրորդ Դասուն սովորած ուսմունքն էին. Հայերէն, Տաճկերէն, Գաղղիերէն, Անգլիերէն, Իտալերէն, Պատմութիւն, Բնական Պատմութիւն, Գրահաշիւ և Երկրաչափութիւն, Գեղադրութիւն հայ, եւրոպական և տաճիկ, Ուրուագրութիւն, Ճայնական Երաժշտութիւն, Մարմնակրթութիւն, և այլն:

Իսկ միւս երկու դասերն դեռ ուսմանց տարերաց մէջ են:

Եւ որովհետեւ վերն յիշեցինք վնեհ տիկ լրագրին մարմնակրթմանաց վրայ

ըրած խորհրդածութիւնը, դնենք նաև ինչ որ կը գրէր պարզեաբաշխութեան երկրորդ օրը :

« Երէկ, առաւօտեան ժամը 11, Հայոց Ռափայէլեան վարժարանին մէջ կա- տարուեցաւ տարեկան ուսմանց պար- գեաբաշխութիւնը :

« Հանդէսը աշակերտաց համախումբ երգով մը սկսաւ :

« Փափաղեան Պ. Յովսէփը բազում ծափահարութեամբ ճառ մը խօսեցաւ խոյսերէն լեզուով : Կարդացուեցան նաև Հայերէն, Տաճկերէն, Գաղղիե- րէն, Անգղիերէն և Գերմաներէն բա- նախօսութիւններ :

« Հանդէսին նախագահ նստած էր Մխիթարեան Ուխտին Ընդհանրական Աբբա՛հայրն և Շիրակայ արքեպիսկո- պոսն՝ Եղուարդ Վ. Հիւրմիզ :

« Ներկայ էին նաև Ֆրանչէսքոնի ասպետն՝ փոխանակ հիւպատի Օսմա- նեան Պետութեան, Ս. Ղազարու Հարը, և այլ բազում հրաւիրեալք և ուսու- ցիչք :

« Արդար պարտք մը կը համարիմ քանի մը խօսք միայն ըսել, այս մեր քառասուն տարուան հիւրոց վրայ,

վաճան զի Հայոց վարժարանն վիճեալի բացուեցաւ յամին 1836 :

« Վննետկոյ ամենէն նշանաւոր ուսու- ցիչք այն տեղ դասատուութիւն կ'ընեն, և տեսչութիւնն ամենևին ծախքի չի խնայեր, միայն թէ աշակերտք հաստա- տուն դաստիարակութիւն մ'առնուն :

« Վարժարանին վրայ մեծ արդիւնք ունեցեր է նախորդ վերատեսուչն՝ հիմա Ընդհանրական Աբբա՛հայր, Եկեղեցեան իղն. վարդապետ, բայց անկէ նուազ պիտի չըլլայ արժանաւոր յաջորդն ալ՝ ճէլալ Գր. վարդապետն :

« Հայոց վարժարանն այն քիչերէն է, որ արտաքին փայլով գոհ չ'ըլլար. այլ ամեն բան հաշուած է յօգուտ ա- շակերտաց, որոնք շատ գոհ պէտք են ըլլալ, գտնուելով այնպիսի վարժա- րանի մը մէջ, որ ամեն կողմանէ կրնայ օրինակ ըլլալ, և որ կտրիճ և կարող անձինք կը պատրաստէ 'ի պարժանս իրենց հայրենեաց » :

Հ. Մ. ՆՈՒՐԻՒՍԵՆ

Ահաւասիկ Շիրակայ հանգուցեալ Դիտապետին ոտանաւոր բանախօսու- թիւնը :

Ի Հանդէս Հարցաքննութեան Մուրատեան եւ Ռափայէլեան վարժարանաց



Մանկտի Հայկազն, որ յաղթօք  
Յիմաստաճեմ ասպարիզի գիտութեանց,  
Ըզժիրաժիրըդ ճըզանց  
Պատկառելոյ հանդիսատես աղմբիս  
Ըզմայլական ետուք փորձ,  
Ուրախակից ընդ ձեզ քընարս եղանի :

Դուք խելամուտք խորագրեացք  
Մարդկեղինի բնութեան կըրիցըս կարեաց,  
Աղնըւախոհ և վըսեմ  
Վաստակ ի յանձն առիք նոցին ի դարման :

Նախաստեղծին լոյս մըտաց,  
իւ ճոխանայր զգերիմաստ ի յեղեմ,  
Աւաղ, խաբամաբ բանսարկուն  
Աղօտացաւ ի ճանաչումն բարոյն .  
եղծաւ հաստեալն յԱրարչն  
Սիրտ միայնոյ ի սէր բարոյն ընդակից :

Յապականեալն աղբերէ  
Խաղաց ապա հանգոյն յորդիսն վըտակ,  
Աղօտալոյսըն բանի  
Եւ աղցաւոր բաղձից բոցոյ հորձ պըղտոր :

Վիրացն ի բոյժ երկոցունց  
Վարժեալք ի հընարա՝ դուք ընդ հիւ քառամեակ,  
Միումն ազգոյ սպեղանի  
Պատրաստեցիք մըտաց ըզլոյս իմաստից,  
Հըզօր միւսումն ի դարման  
Ըզսըրբարար սըրտի հրահանդըս կրօնից :

Հայաւ, մանկտի սիրասուն,  
Փութացարուք նոքիմք վառեալ սպառազէն,  
Հասէք ի բնիկ հայրենիս,  
Յեւանդն ի նոյն վառել ըզմիտս և ըզսիրտ  
Հայրենակից որերոյ,  
Լինել նախնոյ վիրառնութեանըն բուժիչք,  
Որքան է գոլ ձեռընհաս,  
Որքան ներէ անխուսելին պատուհաս :

Ծընորհապարտ գոհութիւն  
Քաղցր է ինձ արդ մատուցանել ձեզք հանդերձ  
Հանդիսադրիդ վաստակոց,  
Եւ որոց քիրտն արգասաւոր ընդ նըմին  
Հեղին ի ձեզ աջակիցք .  
Եւ ուղերձել ուխտ սըրտեռանդն ի յերկինս,  
Ձի որք ճըզանցըդ ձերոց  
Ընդունիք արդ ըզդուղնաքեայդ մըրցանակ,  
Իյլիւ արդեամբըդ ձերովք  
Լիջիք նոցին դուք լիուլի մըրցանակք :

6 սեպտ. 1876

† ԵՒ. ՀԻՒՄԻՒՋ արքեպ. Շիրակայ :